

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Père G. Kalemkarian
to ngasse No 4 Vienne

11. III. 901

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առաստախմանի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ. վեցամս 1.50
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայնն դրկոյ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)
Редация на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւն
էս չեն դիմում արարման դատարան-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյցովի կամ մասնակի.
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

Մեր յարգոյ բաժանորդները
քող բարեհաճին յիշել քե ինչպէս
ամեն քերթերու նոյնպէս եւ իրա-
ռանքի բաժնեգիր կանխիկ է եւ
ներկայ տարեշրջանի երրորդ աւ-
տոյն մէջ կը գտնուին:

ԱՆՄԵՏ ՐԻԶԱ

Անահիտի խմբագիր-անօրէն Տ.
Արշակ Զօպանեան իր յունարի
թիւով կը քննադատէ Աճմէտ
Րիզայի դէմ «Շաւիղ»-ի մէջ երեւ-
ցած այն բացատրութիւնը թէ՛
եթէ մերկացնենք զինք իր ծր-
արմէն Պոլսոյ տոմարահանու-
թիւնի հանդիսանար: «Իրաւուն-
ք»-ի մէջ թրքերէն լեզուով հրա-
տարակած մեր յօդուածներու շար-
քով մենք ալ Աճմէտ Րիզան տար-
բեր չենք գտած Պոլսոյ խումբան-
ստիաներէջ գիտող թուրք պաշտօ-
նեաներէն:

Տ. Զօպանեանի ծայրայեղ կը
թուին մեր այս բացատրութիւն-
ները ընդգէմ իր երբեմնի բարե-
կամ Աճմէտ Րիզային, իսկ Տ.
Զերազ ալ աւելի ծայրայեղ գտած
ըլլալու է մեր այդ տողերը, քա-
նի որ նա ցարդ իր յարգելի բա-
րեկամը կը կոչէ Րիզան:

«Անահիտ»-ի խմբագրապետը Աճ-
մէտ Րիզային փաշադատեւ մը ըլ-
լալը, անկախ նկարագիրը և յա-
ռաժիքական գաղափարները ունե-
նալը, նաեւ Համիտին կաշառքը
մերժելը, անկէ հալածուիլը եւն.
խաւելէ վերջ, Մահմուտ փաշայի
բաժը կրկնելով, Աճմէտ Րիզան
անզուգական թուրք մը կը նկա-
տէ ու կըսէ. «Այսպիսի անձի մը
համար ուրիշ զգացում կարելի չէր
ունենալ, բայց եթէ յարգանք»:
Տող մը վարը ալ Տ. Զօպանեան կը
յաւելու. «Իր գործունէութեան
վերջերս զգեցած ձեւին համար է
որ զգացումներս փոխուած են»:
Այդ «անզուգական թուրքին» մո-
լեանդ թուրք մը ըլլալն ալ չծած
կեր, և վերջապէս կըսէ.

Վերջերս, Րիզայի թրքական ազ-
գայնամուտիւնը սաստկացաւ եւ Մեշ-
վերքի Տնօրէնը սկսաւ թուրքերոյ բրի-
տանայ ազգայնութիւններուն ինքնա-
վարութեան բաղձանքին դէմ ուղղակի
պայքարել, այդ բաղձանքին գործնակա-

նութիւնը եւ արդարեալ իր ուղեւա-
նով. այս վարմանը թերեւ տրամա-
բանական եզրակացութիւնն էր իր
քաջագործին: Բայց ասոր մէջ անհրաւ-
ցեղ եւ միջնա իսկ անուշիւր բան սը
կար, զոր կարելի չէր չի կատել. իր
դատը յաջողցնելու համար, Րիզա
սկսաւ դիմել Պոլսոյ քաղաքի դիւանագի-
տութեան անուղղակի միջոցներուն, ի-
րողութիւնները խեղաթիւրելու, ան-
հիշք կերպով իրերուն կացութիւնը
ներկայացնելու, Հայոց մասին սխալ
տեղեկութիւններ տալու եւրոպացւոց,
եւ այնու իսկ իր իրական համոզումին
մէջ իր ընթացքը դադարեցնելու մեր դա-
միսն ունի: Եթէ այն միջոցին ուր մեր
հարցը մէջնեղ դրուեցաւ, լուռ մնա-
ցած ըլլար, եւ մեր հարցէն յետոյ
կամ առաջ, անշատօրէն թրքական
խնդրոյն մասին իր գիմումը կատարած
ըլլար Համաժողովին ու եւ է առարկու-
թիւն պիտի չունենային ընելու, որ-
չափ ալ իր գիմումը մեր գիմումին
հակառակ ուղղութիւն ունենար ինք
իր թուրքի պարտքը կատարած պիտի
ըլլար, ինչպէս մեր հարցը մեր Հայոց պարտ-
քը: Բայց Րիզա մեր հարցին մեր ու-
ղած ձեւով լուծուելու որոշումը տրու-
ելուն դէմ ուղղակի յարձակեցաւ. եւ
յաջողեցաւ մեզները պոստիւլ: Այդ ըն-
թացքը դատապարտելի էր:

Այս տողերով Տ. Զօպանեան կը
խոստովանի, թէ Րիզա, ինչո՞ն
թիւրքերու այդ ինքնակոչ պետը,
իր ազգակիցներու ձեռքով անխը-
նայ խողխողող Հայերուս ինք-
նավարութեան բաղձանքին դէմ
նշողակի կը պայքարի, անոր ար-
դարեալները կոշտանայ, Պոլսոյ
դիւանագիտութեան դիմում անուղ-
ղակ իր միջոցներուն կը դիմէ,
իրողութիւնները կը խեղաթիւրէ,
նահատակ հայ ժողովուրդին աննը
պատտ տալու ու սխալ տեղեկո-
թիւններ կոշտայ: Եւրոպացւոց,
խաղաղութեան Համաժողովին մէջ
կը դառն Հայոց դատին դէմ:

Սուլթան Համիտին անձը ներ-
կայացնող մասնաւոր թուրք պաշ-
տօնեայ մը իսկ Եւրոպայի մէջ
ատկէ աւելին չէր կրնար ընել:

Արդ, երբ Աճմէտ Րիզա զար-
գացած մէկը ըլլալով այդ ամենը
գիտակցութեամբ կրնէ, ինչո՞ն նա
նուազ գաղափարաւոր ըլլալ քան
այն տոմարահան, որ տղիտարար Րի-
զայի պէս զարգացած թուրքերու
հրամանը միայն գործողութիւն: Սո-
փաճին իր տղիտութեամբ գոր-
ծած չարիքին ծանրութիւնը չէր

կրնար ըմբռնել: Բայց Աճմէտ Րի-
զա ինք կանխատեսած թեւածք կը
չարագործէ և ի պահանջել հարկին
Պոլսոյ քաղաքի դիւանագիտութեան
անուղղակի միջոցներուն ալ կը
դիմէ. որ ըսել է երբ գործի գը-
լու լսանքին՝ հարկ տեսած պա-
հան խումբանին ձեռքը սփռաներ
ալ պիտի տայ:

Արդէն իր սեւ հոգւոյն այդ հը-
րէշային պատկերը չէ՞ր որ ցոլա-
ցուց, երբ իր «61 ՅՕԴՈՒԱԾ»
վերտառութեամբ յօդուածին մէջ
կըսէր թէ՛ 1895ի բարենորոգման
ծրագիրը Սուլթանը ընդունելով
Գեապանքը ծաղրեց — կոտորած
ները անխորհիւ ուղեւոր — և շատ
աղէկ ալ ըրաւ:

Դեռ այս կարգի շատ փաստեր
Աճմէտ Րիզան, խալիլ Կանէմը և
ուրիշ իրենց համախոհները այն-
ատենից կը մերկացնեն, որ զի-
րինք Պոլսոյ գեներալ տոմարահան-
ներէ, Էնիսներէ անդին, Եւրոպ-
այի վանդակներուն մէջ փակուած
գաղանկներուն խորամանկ մեղա-
կիցները կը ներկայացնեն: Համի-
տը գահուն վրայ բազմած իր վար-
մունքովը աւելի Հայկական ու
Մակեդոնական խնդիրները կը հը-
րահրէ, իսկ Աճմէտ Րիզան Եւ-
րոպայի մէջ իր «Մէշվերէթ»-ովը ու
գործունէութեամբ թիւրքերոյ մար-
տիրոսացեալ քրիստոնեաներուն մա-
նաւանդ Հայերուս փրկուելու հա-
մար ապաւինիլ ուղած ճիւղը, Եւ-
րոպայի հանրային կարծիքը, բե-
կանել կը փորձէ:

Աճմէտ Րիզա անձնապէս Տ. Զե-
րազի և Տ. Զօպանեանի բարեկամը
եղած կրնայ ըլլալ (իսկը տեսնեն).
բայց հայ ժողովուրդին ընդհան-
րութեանը համար Րիզան իր ամ-
բողջ էութեամբ գարանակալ գա-
ղան մըն է, որ իր որսը բլբլեւելու
համար առիթին, Համիտին մեռնե-
լուն կամ իրենց գործի գլուխ անց
նելուն, կոպտէ:

Մեզ համար անծանօթ չեն այդ
«Ժէօն թիւրք»-ներուն կոտակցու-
թեան հիմնադիր Միթհատ փաշա-
յի գործերն ալ. երբ սա Պուլկա-
րիոյ ազատութենէն առաջ Գիւս-
ճուգի վալի էր, իր հրամանովը
ամեն օր բազմաթիւ պուլկարներ

կախաղան կը բարձրանային, և
ասոնց համար շատ տնգամ թրքա-
կան դատաւարութեան խեղկատտ
կուլիներ իսկ աւելորդ կը տեսու-
էր:

Գորպիք

ՄԵԾՆ ՖՐԵՏԵՐԻԿԻ ԿՏԱԿԸ

Ամեն անգամ որ Գերմանիոյ մա-
սին տեսութիւն մը եղած է, միշտ
ակնարկուած է այն հզօրացումի,
ծաւալումի և յառաջացումի շրջա-
նը որ անարգել կը բոլորէ Գերմա-
նական վերահաստատուած կայս-
րութիւնը, մէկ քառորդ դարէ ա-
ւելի ժամանակէ մը ի վեր:

Գերման կայսրութեան վերահաս-
տատման յաջորդ օրն իսկ գործա-
դրութեան դրուեցաւ այն ծրագի-
րը, որով պիտի քալէր վերածն-
եալ երիտասարդ կայսրութիւնը:

Յրանգօ-Ալման պատերազմին և
Գերման կայսրութեան հիմնարկու-
թեան էն գլխաւոր պատճառը
Պիլզմարք ետտէր և ճարտար դի-
ւանագիտութեամբ մը իր երկրին
դէպի մեծութիւն քալելիք ճամ-
բան հիանալի կերպով յարգարեց-
այսպէս թէ այնպէս չէզոքացնե-
լով այն արգելքներն ու խոչըն-
դները, որոնք բնականօրէն և ա-
պահովարար պիտի ելլէին Գերմա-
նիոյ դէմ, այն առջի շրջանին մէջ
ուր պիտի կազմակերպուէր ամրա-
պէս և ինքզինքը պահելու համար
անհրաժեշտ եղող զօրեղ հեղինա-
կութեանը պիտի տիրանար:

Ինչ էր Պիլզմարքեան ծրագի-
րը և անոր հիմնական տեղը: Այս հար-
ցին անդրադառնալէ առաջ, աւե-
լորդ չէ պատմական պատիկ «ա-
նէքթոն»-ի մը յիշատակութիւնը
որ տեղի ունեցած է Գերմանիոյ
արդի կայսեր Վիլհելմ Բ-ի երբ
տակաւին երկրորդ աստիճանի ժա-
ռանգ էր Հոհենզոլերն գահուն և
Արշիդուքս Ռոտտեմի մէջ, նախ-
կին գահաժառանգին Աւստրիոյ,
ծանօթ իր անձնասպանութեան ե-
ղիական պարագաներովը:

Օր մը Վիլհելմ Բ Ռոտտեմի
մէջ տեղի ունեցող տեսակցութեան
մը միջոցին, խոսակցութեան դրա

ձուլածքը կը յանգի այն կէտին թէ ինչ պիտի ընեն Երկր. քն ալ երբ զահ ելլեն :

Վիլհելմ կը յայտարարէ թէ ինչ քը ընդգրկողն ու աւելի ուժգին թափով մը շարունակողը պիտի ըլլայ իր նախահայրերէն Մեծն Ֆրէտէրիկի «կտակին» :

Գերման իշխանին այս յայտարարութիւնը խորապէս կը ցնցէ Ռոտտֆ արշիդուքսը , որ մէկէն ի մէկ կը պոռայ . «բայց այդ կը տակը Աւստրիոյ շնորհմը կը տըրամագրէ» : Երկու թագաժողովները այն օրուրէն իրարմէ բաժնուած են :

Ռոտտֆի պատասխանը Ֆրէտէրիկի կտակին բնոյթը յայտնի կերպով կը պարզէ , որ միեւնոյն ատեն Պրիւսիոյ ծրագրին հիմնական կէտը եղած է :

Ֆրէտէրիկի կտակին առաջին յանձնարարութիւնն է Գերմանական կայսրութեան վերահիմնումը , ինչպէս որ ալ եղաւ , և անոր հզօրացումին ու տնտեսականութեանը համար Գերմանացման քաղաքականութեան ուժ տրուիլը :

Ֆրէտէրիկի կտակին ընդհանուր գիծերը շատ մօտէն կը շօշափեն Մեծն Պրիւսիոյ , ուստի Չարին կը տակը :

Գերմանիոյ կայսրութեան հաստատուելէն մինչեւ ցարդ սահմանափակման ժամանակամիջոցին վրայ ելծէ ահանարկ մը նետենք , որուն էն զԸԼ խաւոր շրջանը Պրիւսիոյ օրերը կը կազմեն , պիտի տեսնուի որ Գերմանիա՝ Գերմանացման քաղաքականութիւնը , կայսրութեան հըրատարակուելուն երկրորդ օրէն կընդգրկէ և յամառ ու զօրեղ թափով մը դէպի այդ կէտ նպատաւ կը կերթայ :

Սակայն գերմանացման քաղաքականութիւնը ըսելով , չի հասկը նանք միայն այն խուլ և յայտնի ջանքերը որ կըլլան Գերմանիայէ դուրս ապրող Ալման տարրերը դաշնակցային կայսրութեան հետ միացնելու համար : Այլ միեւնոյն ատեն Գերմանիա բնակող ալլացեղ ժողովուրդներու Գերմանացումին հարցն ալ կայ , որուն համար Պրիւսիոյ դահլիճը և վիլհելմ Բ. առաւել քան երբեք խտտութեամբ կը հետապնդեն :

Այս տեսութիւնները շատ լաւ կը հաստատուին այն խիստ միջոցներով որոնք ձեռք առնուեցան Ալլաւս—Լորէնի մէջ հանդէպ Ֆրանսացուց և այն յայտնի արդիւքով որ տակաւին երէկ դրուեցաւ Գերմանական Լէհաստանին մէջ , լէհ լեզուին ուսուցմանը դէմ :

Անցեալները Աւստրիոյ մասին տեսութեան մը մէջ , ակնարկելով այդ երկրին Գերման և Սլաւ տարրերուն մէջ տիրող խռովութեան , ըսած էինք թէ , Աւստրիոյ առաջին Գերմանները կուզեն Աւստրիան զուտ Գերմանական երկիր մը դնել և թէ օգի ի բռնի կը հակառակին Սլաւ տարրերուն ուրոյնութեան տեղ մը տրուելուն , ինչ որ ելծէ ոչ այսօր սակայն թերեւ մօտաւորապէս :

պագայի մէջ Աւստրիոյ գերմանացման գործը զգալիօրէն կրնայ զժուարացնել :

Այսօր Գերմանիա իրեն հպատակ ալլացեղ մասերուն գերմանացմանը յայտնի աշխատելէն զատ սխալ չէ ենթադրել թէ՛ միեւնոյն ատեն խուլ գործողութեանց ալ սկսած է արտադրական Գերմանացման վայրերու մէջ :

Այս ենթադրութիւնները հաստատուի մը չափ գործադրուի կսկսին . երբ Աւստրիոյ խորհրդարանին մէջ Գերման Երեսփոխաններուն Սլաւ Չէհերուն պահանջումին դէմ խօսելով բացարձակապէս ալ կը յայտարարեն թէ , Մեք Գերմանիա դաշնակցութեան հետ կը միանանք :

Ասկէ զատ նկատի առնելիք խիստ ուշագրաւ կետ մ'ալ կայ : Անկէ—Պօէր պատերազմին հետեւնօք Բրիտանիոյ և Հոլանտայի միջեւ եղած դարեւոր բարեկամական կապը շատ գէշ թուեցաւ . և այդ թուականին մէջ ալ առաջ եկաւ Անկէ—Գերման մերձեցումը :

Հոլանտա այսպէսով կերպ մը լքուած Միքլիթայէն , այսօր միսմիակ կը մնայ իրեն կրօնական և գրեթէ ցեղակից , զօրեղ և ազդեցութեանը ու ծաւալին ուժ . մանր ընդլայնելու հաստատապէս մտադրած զրացիին՝ Գերմանիոյ քովը :

Եւ Գերմանիա՝ Հոլանտայի Անգլիոյ կողմէն զգալի լքումէն ի վեր , մանաւանդ Անկէ—Գերման մերձեցումէն ասդին , սերտօրէն կը մօտենայ Հոլանտայի և տնտեսական փոխկապակցութեամբ մը իր յարաբերութիւնները կը մշակէ օրէ օր : Երբեք հետզհետէ պաշտօնական հաստատ կապեր կառնեն , մաքսային և ալլ համաձայնութիւններով :

Չօրեղ է այն հաւանականութիւնը թէ՛ առաջի առթիւ Եւրոպայ պատահելիք երկրային յաղաղութիւն մը ատեն , Աւստրիոյ Գերմանական նահանգներուն հետ Հոլանտա ալ իր կարգին այդ ահեղ կայսրութեան մէկ մասը պիտի կազմէ :

Քսաներորդ դարու շրջանին մէջ Եւրոպայի տէրը , փոխան վեց տեսութեանց , հաւանօրէն երկու կամ երեք ազգեր պիտի ըլլան , որոնց մէջ անկասկած է որ Անգլիա և Գերմանիա վերի գլուխը գտնուին : Մոռին

ՄԱԿԱՐՈՅԾՆԵՐԸ

Ընկերութեան է՛ն սպասուած ցեղերն են անոնք , մակարոյծները որ ամեն ազգի այս կամ այն դասակարգին մէջ անբեւեակայելի ճարպիկութեամբ սպրդած՝ արիւն կը քսան իրենց սիրտ խառնուող գոյութիւնը քարշ տալու , կաշիներն ապրեցնելու համար : Ամենրոպէ գոյն ու կեղեւ փոխող գետնաբիւծներ են անոնք , որոնց համար բարոյական ոչ մէկ արբութիւն կայ , իրենց խայթը բզզիւնի չափ

գին չունի և արժանապատուութեան զգացումը ունի բառ է : Աղտոտ վիժակներ՝ որ ատակ են աւան տեսակ լրբութիւն ու սրիկա . յաւիտէն ի գործ դնելու , դաւաճանելու ամեն բանի դէմ բաւական է որ իրենց զեղի գրպանին մէջ դանկ մը ինչալու հաւանականութիւն նկատեն :

Ամեն առաջադիւծ մօտ , հիմնապէս ոչ մէկ բանի ընդունակ պըզ պլակներ են անոնք , որ կեղծաժպիտ ասպարէզ կը նետուին իրենց գիւթական հնարքները ի գործ դնելու , կէտ նպատակի ու նենալով իրենց առջեւ ելածը քան դելը , քանի որ քանդողի կոշումը ունին :

Աւրոգ կրքերու ցանցին մէջ անճողպրելիօրէն բռնուած , ժամանակաւոր պատրու չպարի տակ հասարակութիւններու հետ կը խաղան , կեանքեր սպաննելու հակառակ , անհասարակ կը փճացնեն եւ անորակիլի կատաղութեամբ մը , որ իրենց յատուկ է , միեւնոյն աչքով կը նկատեն օրուան հացի կարօտ մուրացիկը , ինչ աչքով որ կը նկատեն մեծափարթամ դրամատէրը : Անոնց համար բաւական է որ ստամոքս պարարող հացահատիկ մը նշմարուի չուսուի մը մօտ : Համեղագոյն պատուելին է ան որուն ամեն գնով պէտք է տիրանալ լայն փոխաբերութեան առաւ խոստումով , մինչդեռ բռն նպատակներն նոյն այդ չուսուին յաւիտեական մահը երգել է :

Անոնք , այդ մարդակերպ հրէշները , յաճախ ոսկորի ու չոր կաշիի անարդ կոյտ , շան հոտառութիւն և արծուի արատեսութիւն ունին : հեղ գառնուկի պէս կորազուլ և մերթ ալ կորաքամակ կանցնին հասարակաց մէջէն , անտարբեր անփութութեամբ , եւ սակայն անոնց նկատողութեանն ոչ մի պարարտ պատառ չվրիպի . արիւնաքամ նալուածքին տնկող մը յառած , նախապէս բորեանի զգուշի նազանքով , ապա գիշատի չի արիւնախանձութիւնով անսրվեայ կը յարձուկին պատուելու համար եղելիլ որսը որ զինաթափ , գուլ կը հայցէ հրէշէն :

Բաւական է որ անգամ մը թաթերին իրենց որոնի կուրծքին վրայ ծանրացնեն , ալ ևս միակ գործերին պահանջիլը , անվերջ պահանջիլն է . «պէ՛տք է , անհրաժեշտ է , տո՛ւր ինձի , այսօր հացդ , վաղը քսակդ , օր մըն ալ վերջապէ՛ս կեանքդ» . և որսը անբացատրելի ապշութեամբ կը համակերպի , իր միտին ու արեան փակած հրէշ—մոկարոյծին նախապէս հացը , վաղը քսակը և օր մըն ալ կեանքը տալ մոխրի վրայ նայելու համար . ու մակարոյծ ի յոս անոր կը հրճուի ներսնան հրճուածքով :

Ամեն առաջադիւծ մօտ , հիմնապէս ոչ մէկ բանի ընդունակ պըզ պլակներ են անոնք ըսինք . ա

նոնք այդ քաղի յեղափոխականներ ուսուցչապետի մը չափ կը ճանչնան դպրոցը , եպիսկոպոսապետի մը չափ եկեղեցին , Աստուծոյ մը չափ ազգը , զգաստ ու զարգացած անձնուրացի մը չափ յեղափոխութիւնը , բաղդին մէկ երկու . կոյր բերուով անշան յաղողութիւններ ունեցած , կը հաւատան և հաւատացնել կուզեն ինքզինքնին միամիտներուն : Ծրագրիներ կ'առաջարկեն , բիւզանդիոնական վէճեր կը յարուցանեն , ազգին փրկութեան ռահվիրան ըլլալ կը յաւակնին , թրքական սահմանը անցնելու պատրաստակամ մարտիկներ կը հռչակեն ինքզինքնին , մինչդեռ հրացան բռնել չեն գիտեր : Երկրորդի վրայ հօր ու ծնունդ տեղացնելու պոռոտախօսութեան հակառակ տկար վաշխառուի մը գործիք կը դառնան :

Ասոնց ամենուն մէջէն փնտռած են ինչ դպրոցներու օրինաւորութիւնը , ոչ ազգին բարիքը , ոչ յեղափոխութեան բանաւոր փրփականքը , ոչ եկեղեցիին փառքը , ոչ ալ որս—ընկեր անհատներու նիւթական ապագան կը կազմեն : Անոնք , այդ պժգալի մակարոյծները , այդ յայտատ փոխտափողի , ծաղրի , կեղծ լրջութեան , ծիծաղի , կոկորդիլոսական արցունքի , ամեն տեսակ ոճիւր գործելու ընդունակ այդ դէմքերը ուրոյն գոյնիւրու տակ յայտնուելով ուրոյն շրջանակներու մէջ միակ նպատակ մը ունին . յափշտակել :

ՄԱՍՈՒԼԻ ԾՈՒՐԶԸ

—(—)

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան օրկան «Մարտի» վերջին թուոյն ճակատը հետեւեալը կը կարգանք .

«Դաշնակցական Կուսակցութիւնը վերջնականապէս մերժեց Պատուոյ Առեանի մը վճռին ներկայացնել Հնչակեան կուսակցութեան կեղծ վարչութեան մէկ անդամին դէմ իր յերկրածամրապատանութիւնները , եւ անոր ստորագրութեամբ հրատարակած մէկ պաշտօնաթուղթը : Դաշնակցական կուսակցութեան այս փախուստը բաւական պիտի համարուէր խնդիր մըր կողմէն փակուած նկատելու համար , բայց կուսակցութիւնս որոշած է ճշմարտութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով պարզել , առանց աւանաջնջի տարակուսանքի մը հետք թողուլ . հետեւաբար կեղծ վարչութիւնը այս նպատակաւ իր ըրած անօրինութիւնները քիչ ատենէն (*) պիտի հաղորդէ հայ ժողովուրդին , որ կուսակցական բարոյականութեան այս մեծ խնդրին մէջ գերազոյս դատարարն է» :

Անանիտ «Բրօ Արմենիա» ի հըրպարակ երկու մասին խօսելով շատ անխորհուրդ և անհիշք կը

(*) Ծ . խնք . Փափաքելի է որ այդ ինչ անհիշք կրկին վեց ամիս չի տեսնէ :

գտնէ Պ. Չերազի և «Շարժում»-ի այն յայտարարութիւնները թէ «Բթ Արմենիան» Դաշնակցութիւնը հիմնել է. և կը յարէ «ասի պարզապէս դաւաճել է այն թերթին վարկին գէժ, որովհետեւ Սուլթանին և Եւրոպային հասկցնել է աւտիկա՝ թէ «Բթ Արմենիայ»-ի յօդուածագրերը Հայ Գեօքիթէի մը ուղղակի և մշտական ներշնչմանը տակ կը շարժին և այդ թերթին ցրանագիրներու հայասիրութեան անկախ և ինքնաբերական մէկ յայտարարութիւնն ըլլալու արժանիքը չնշել»։ «Բթ Արմենիան» գործն է Պ. Բիէն Գիւրիսիանի, որ շատոնց կը ցանկար թերթի մը մէջ կեդրոնացնել իր պայքարը Սուլթանի կառավարութեան, և որ՝ իր մէկ քանի մեծանուն աշխատակիցներուն հետ՝ միակ վարիչն է այդ թերթին, և պէտք չունի ոչ մէկ կուսակցութեան խորհուրդին կամ թելադրութեան։

Հախախտւաւ բոլոր հայ թերթերէն բացառութիւն կը կազմէ «Գուլթան»ը գնահատելու մէջ։ «Համալսարան»ը գրեթէ չորս էջեր զոհած է «Գուլթան»ի առաջին թիւը քննադատելու համար. բայց իր բոլոր ըսածները խճճեցին անգին չեն անցնիր։

«Գուլթան» առաջին թիւով ներկայացած է մեզ Հայոցոս նման հոգաբարձ ժողովուրդի մը անհրաժեշտ մէկ պէտքը լիցնելու, ինչ որ Համալսարան իր շատ մը առաւելութիւններովը հանգեցնէ կարող չեքել ընել։ Գուլթանի ընտրած ճիւղը Հայոց մեծագոյն մասին ախչափ կարեւոր է որչափ հացը բաղածի մը։ Համալսարան, ցարդցոյց տուած իր ուղղութեամբը այդ պէտքը լիցնելէ շատ հեռի գտնուած է։

Փափաքելի էր որ Գուլթանը ամենէ աւելի քաջաբերողը Համալսարանը ըլլար իրեն քոյր հանդէս։ Սիւսն մեզ ցաւալի թուած կէտը սա է որ Գուլթանի խմբագիր Պ. Մեծատուրեան, կերելի թէ նիւթական մի քիչ պատրաստութիւն կանխաւ տեսած չէր որ երկու ամիսէ ի վեր երկրորդ թիւը չկրցաւ հրատարակել, որուն այն չափ անհամբերութեամբ կը սպասէ ժողովուրդը։ Մենք «Գուլթան»-ի յովտութիւնը երաշխաւորուած կրնանք նկատել, եթէ անոր խմբագրութիւնն ալ բաժանորդները ապահովցնէ, թէ անընդհատ պիտի շարունակէ հանգէսին հրատարակութիւնը։

ԳԵՂՈՒՆԻ

Շնորհակալութեամբ ստացանք «Բազմաշէկ»-ի խմբագրութեան հրատարակած ԳԵՂՈՒՆԻՆ, ԳԵՂԱՐՈՒՆԱՍԻ այդ հատընտիր փոք-

րիկ գործը անգամ մը ևս ի յայտ կը բերէ վերնտիկի մեր Միւթարեան հայրերուն գեղեցկագիտական կիրթ ճաշակը, որ հայ մամուլին մէջ գեղեցիկ չի տեսնուած խիստ գեղեցիկ փնջիկ մը կուգայ արտագրել։ Ասկէ առաջ Արաքսի և Որ. Քոռնիի գեղեցկերտ նկարներուն ի տես հրճուող հայը Գեղարարի առաջին մասը զարդարող գերազանցապէս գեղեցիկ ու նրբակերտ նկարներն տեսնելով պիտի սքանչանայ։

Գործին ճակատը նախ կը տեսնուի խիստ գեղեցիկ մանրշակագոյն նկար մը որ դիցաբանական երեւոյթի մը տակ կը պատկերացընէ գեղարուեստին բոլոր ճիւղերը. տեսարանը որչափ իմաստալից այնչափ ալ հրապուրիչ է։

Խմբագրական կարճ յառաջաբանին յաջորդող երեսը ամբողջովին գրաւած է Յովհաննէս Ալվազովսկին, իր արուեստանոցին մէջ վրձին ի ձեռքին, կիսակերտ ծովա նկարի մը պակաս մասերը ամբողջացնելու զբաղած։ Այդ պատկերը գիտողը մեծանուն ծովանկարիչը անձամբ իր գէժը ունեցածի չափ պատկառանք կը զգայ։

Երրորդ պատկերն է Հարաւանիք Տարսնի մէջ։ Սա յաջորդած լուսանկարի մը արտատպումը ըլլալ կը երեւի և որ մեզ կը վերջիչցնէ իրական գոյներով գեղջկական անհարմարեցնելու զորս ժամանակաւ տեսած և կամ բազմիցս անոնց նկարագրութիւնները կարդացած ու լսած ենք։

Չորրորդ, Ռեքամարիի Ազգային որդերը. այս պատկերը պարզ լուսանկարի մը արտատպումն է. բայց հոն պատկերացող որբուկներու դիմագծերը կենդանութեան կատարեալ արտացոլումը պահած են եւ դիտողին համակրանք ու գուրգուրանք կը ներշնչեն։

Հինգերորդը Կիսարացի ոսկերիչներու կողմէ 1672 ինչ նկատած արժանապատ գրքի մը կողքն է որ իւր հայ ոսկերչութեան ինքնատիպ մէկ հնութիւնը գնահատումի արժանացած է։

Վեցերորդ երեսը վաղամեծիկ գերասանապետ Պետրոս Հ. Ադամեանի չորս նկարներովը կը զարգարուի, 1. Ադամեան ինքը, 2. Ադամեան «Լիւր Արքայ»-ի գերին մէջ, 3. Հաւելքի, և 4. Օրէլոյի տարազներով։

Այս նկարները կը բաւեն Ադամեանը թատերաբեմին վրայ չը տեսնողներուն գաղափար մը տալու ա. նոր տաղանդի մասին։ Բոլոր գիտողները պիտի բացազանչեն, «Եւր Ադամեան», ո՛ւր Արքայի Լիւր. Եւրոյ՝ Լեւոն Ե-ի շիրիմէն, Զուգայի մահաբձանէն և Սիւսիական վրայ համառոտ ծանօթութիւն մը տալէ վերջ կ'սկսէ գործին գրական մասը։ Ուր նախ Հայր Ղ. Ալիշան կ'երգէ Հայ Հայրենիքը, Եւրոյ ազգային մեծ բանաստեղծ Ռաֆայէլ Պատկանեանի կեանքին ու գործունէութեան նկարագրութիւններուն շատ ընդարձակ տեղ մը կը տրուի Մշակին, Նոր-դարին և Մոռնիին Պատկանեանի համար ատենօք գրած յօդուածներէն ալ մասեր կը զետեղուին հոն։

Դազալիկ Խաւար գողտրիկ ոտանաւորէ մը վերջ կուգան վերջին օրերու մեծ խմբագրութիւնը։

որերու մեծնող իտալացի տիեզերահաշակ երաժիշտ վերտիի նկարը և անոր ձօնուած 2 1/2 երեսներ։ Ասոր կը յաջորդեն Նալբանդեանցի տան և շիրիմի նկարները ու պատմական, տեղագրական ծանօթութիւններ, Տարագէն քաղաքի ճանչցումը հանրածանօթ բանաստեղծուհի վերտորիա Աղանուրի նկարին կցուած է անոր մէկ հեղինակութեան թարգմանութիւնը Զատուրը անունով։

Գեղարարի վերջին քանի մը երեսը գրեթէ բոլորովին յատկացած է Որդանիի հրատարակութեան պատգաններուն բացատրութեանը և արտասահմանի մամուլին անոր մասին յայտնած կարծիքներուն։

Գեղարարի մասին խմբագրութիւնը իր յառաջաբանով կ'ըսէ. «Մեր Որդանիի հրատարակութիւնը ընդունուեցաւ իբրեւ գեղարուեստական կատարեալ գործ մը, մինչդեռ նա միմիայն խնամատիպ հրատարակութիւն մըն էր։ Նոյնպէս ներկայ գործս, որ իբրեւ գեղարուեստական (և ոչ թէ գրական) հրատարակութիւն մը լոյս կը տեսնէ, մենք կը կանխենք բացուել, որ սա տակաւին շատ պակասաւոր է, այն ատեն մենք ամեն ջանք պիտի թափենք կատարելապէս գեղարուեստական գործ մը ստեղծելու մեր աղքատիկ մամուլ մէջ, երբ ապահով ըլլանք որ մեր հրատարակած պրակն կարող պիտի ըլլայ իր ծախքն գոցելու»։

Խմբագրութիւնը կը խոստանայ առ այժմ փորձի համար մերթ ընդ մերթ հրատարակել Գեղարարին և յիշել իբր նուէր Բազմաշէկի բաժանորդներուն։ Իսկ դրէն ով որ կը փափաքի ստանալ պարտի 2 1/2 Ֆր. զրկել Բազմաշէկի պատ. խմբագրութեան։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

«Հայիկ» շաբաթաթերթին 24 փետրուար եւ 201 թիւին մէջ, իւր թէ տեղւոյս ժողովուրդէն մին, կրկին անգամ բողոքականաց ժողովարան երթալով պակուած ըլլալուն անհաւանական խոշոր լուր մը գրուած էր։ Արդ՝ խորհուրդս՝ սոյն անիմաստ լուրը իմանալով քննութիւն կատարելու պարտականութիւնը ունեցաւ, եւ տեսնելով թէ այդ տեսակ անխորժ ընթացք մը տեղւոյս մէջ չէ պատահած մինչ ցայժմ եւ արդէն սուտ ըլլալը (առանց անուն տալու) անուղղակի կերպիւ գրուած ըլլալէն ոքքան որ ինքնին կը հասկցուի՝ սակայն, կրկին խորհուրդս, պաշտօնապէս սոյն խոշոր սուտը հերքելու պարտականութիւնը զգաց, ի գիտութիւն բարեփառ ընթերցողաց։

Ուստի. եւ ցաւ ի սիրտ կը յայտարարեմք հրապարակաւ թէ՝ տեղւոյս ժողովուրդեան մէջ քանի մը խոսնակիչ մարդիկ, իրենց թաղուն նպատակներուն համար, եւ իրենց անձնական անտեղութիւնները եւ կիրքերն ինչպէս ցանկանալու համար, հանրային գործերուն վրայ խոշոր սուտեր հրապարակ նետելու յանգեցնութիւնը կուենան։ Ամօթ է, հրապարակաւ կը յորդորեմք մի քիչ անկեղծ ըլլանք։

Ի դիմաց Թալ. խորհրդոյ Աստեղագիր Աստեղագետ Մկրտիչ Պուրկազեան Յովհ. Պողոսեան Տօպրիչ 6 Մարտ 1901

Մ. Խւր. — Այդ իմաստով նամակ մը «Թղթակից» ստորագրութեամբ մեզ ալ եկած էր, բայց չի հրատարակե-

ցինք անհաւատալի գտնելով. սակայն «Շարժում» նոյնութեամբ հրատարակած էր իր 291 թիւով. քանի մը չափով վերջ ալ «Հայիկ»-ն զաւելտական հեռագրի մը ձեւը տուած էր անոր։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Ֆրանսական դեսպան Պ. Գոնսթան Պատրիարքարան հրթալով փոխադարձ այցելութիւն տուած է Պատրիարքին։

— Մեծ գոհունակութեամբ կի մացուի թէ վերջերս Բարիզի Գեղարուեստական ակադէմիին մէջ Պ. Սերովբէ Գիւրքեան անուն Պոլսեցի հայ երիտասարդ մը փայլուն յաղթանակ մը տարեր է, մրցման քննութեան ատեն 64 քաղարուեստագէտներու մէջէն իւր նը կարիչ առաջին հանդիսանալով։ Ակադեմիին առաջին մրցանակը տուեր է Պ. Ս. Գիւրքեանին, որուն տաղանդին համար Ֆրանսայի գեղարուեստական թերթերը մեծ գովեստով կը խօսին։

— Պոլիս Բերա իւնիօն Ֆրանսէզի սրահին մէջ տեղի պիտի ունենայ ինպատ Ազգային հիւանդանոցին նուագահանդէս մը։

— Ի նպատ Սադրեանի որբերուն Պոլսոյ Սուրհանդակ թերթի ձեռնարկած հանգանակութեան գումարը հասած է 10,535 դրուչի։

— Պոլսոյ քաղաքական ժողովը Պատրիարքի նախագահութեան տակ գումարուելով, զլիսուորաբար նկատի առաւ Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան զրկած վերջի տեղակազիրը և լսեց Պատրիարքի տուած բերանացի բացատրութիւններն ու տեղեկութիւնները որոնցմէ ժողովը մեծ գոհունակութեամբ իմացաւ թէ, որբանոցին մէջ մինչեւ ցարդ ըսուածին նման թոքախտի համաճարակ չը կայ։

Ժողովը Գարակէօզեան կտակին տոկոսը Հիւանդանոցի հոգաբարձութեան տրամադրութեանը տակ դրաւ որպէսզի որբերուն անդեան և այլ պէտքերուն ալ աւելի լաւ հոգ տարուի։

— Գոհութեամբ կ'իմանանք Ամբիկայի թերթերէն թէ, Ամբիկայի Հայոց մէջ սովորակուն դարձած է հարսնիքներու և այլ հանգէսներու մէջ ի նպատ որբերուն նուէրներ տրուելը։

— Մէկ քանի բարեսէր ազգային ներ Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի և Մայր եկեղեցիի հարկ եղած նորոգութիւնները իրենց քրակէն ընել որոշած են։

— Տիար Կարապետ Գարագաշեան Բարիզի «Ասիական ընկերութիւն» անունուած աշխարհագրական մարմնոյն անգամ բնորուն եր է. Յիշեալը արդէն Բարիզի Արեւելեան լեզուներու ընկերութեանց անգամ էր։

ՄԷՔԹՈՒՊ

«Իրաւունք» կազմէ՞տաք մուհարիրի ճանիպի ալիսինէ։

Էֆէնտի, կազմէ՞տաք ընդ չօգ նիւս. խէլերինտէ, միւթագիւմ պիր մէպ տէյէ խըումէթ իթմէքտէ վէ տա յիւմ խաթըր կէօնիւ պազմայաւ. բազ ումումուն մենափիսինէ արգուքէյ օլտուղունուղուն հէմիչէ ի-

լան իտէ կէլմէքտէսինիզ . կիւղէլ ֆազալ 3 մարտ 17 Նոմէյօրու կաղէթանըզտա Առաքել Օտտապա . շրեան նամընա վուգու պուլան մէ սէլէյի (պինճէ մէճհու) կաղէթա . նըզտա իլան վէ նէշր իթմէք իլէ ումուժա վէ եախօթ միլլէթէ վէ եախօթ մէտէնիլէթէ վէ սաիրէ նէ հըտմէթ իթմիշ օլույօրսուճուզ , րէճա էտէրիմ կաղէթանըզըն պիր նիւսիւնսինտէ շու վարադարիմի նէշր իլէ իյնապ իտէն իզահաթըն տախի իլապէսինէ հիմմէթ էտին :

Գարինլէրինիզտէն Մ . Հայրապետեան վառնայ 4 մարտ 1904

ՃԵՎԱԳԸՄԸՉ

Թէէսսիֆէն եազտըլըմըզ մէզ . քիւր պիր գաշ սաթըրըն տխրագ նօթթաի նազըրըտա նէ մանասը օլտըղըն էյի աւլամագ իչիւն , կաղէթամըզըն 7 ինճի նօմէրօսըն . տա Ամուրիմ սէրլէվհասը իլէ եազ մըշ օլտըղըմըզ պէնտի պիր տէֆա տահա օգուճանըզը թափսիլէ իտէ րիզ :

Կէնճէրիմիզ իչիւն իսէ , մէզ . քիւր պիր գաշ սաթըրըն «զըսա . տան հիսսէ» օլաճաղը աշիքեար տըր :

Էվվէթ , քէնտի վիճուտլէրինի ալէմին ալագասընա վազ իտէն լապ պիսէլէրին իրֆալաթընա գաբըլ . մագտա օլան կէնճէրիմիզ սէրվէսթ ու սըհհէթլէրինի թէհիլէթէյէ գօյ մագտան մատա , հէր նէզ շէյ . թանի թէշվիզաթլարա վէ եախօտ իֆթիթալարա տախի ուղրօյաճագ լարընը աւլամալը տըրլար :

Գրաստան հիսսէ :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

—)օ(—

ԹԻԻԻԳԻԱ

Սէլանիկտէ թապ օլընսն Սէր վէթ կաղէթասընըն պէյանընա նազարէն , շէհըր մէզըրիտէ թու թուլան պուկարարըն իսթինթագ լարը պիլմիշ վէ մուհաքէմէլէրի նէ պաշլանմըշ տըր : իշպու մու հաքքէմէլէրտէ Սէլանիկ էճնէպի գօնօլուլարը հազըր պուլունույօր լար :

Մէզքիւր Սէրվէթ կաղէթասը միւթթէհիմ օլարագ «րէֆօրմ» կաղէթասընըն յուլպիրի օլմագ թէօհմէթի իլէ Միլան Միլանիլ վէ Գօշօ նամ իբի քիշի կէօսթէր մէքտէ վէ գօսթիթէ ազասը տէյու Ֆլօրինալը Գօշօ , Սէլանիկ պուկար մէքթէպի մաւլիմլէրինտէն խրիսթօմաթօֆ վէ խրիսթօնօգօֆ էքզարքհանէ քեաթիլլէրինտէն Նաուժ Թօզէֆ , Վասիլ , Անկօթօ դէ , Տօքթ . Թաթարճիէֆ Թանաշ Եօրկի վէ սալիլէի արոյլէ իթմէք տէ տիր :

—Ինկիլիզ կաղէթալարընըն պէյանսթընա նազարէն , 17 պուկարարին իտաժը հիւքժ օլունմուշ օլուպ պուկարտան 11 ի Սթան պօլտա վէ 9 ըտա Սէլանիկտէ սսըլաճագլար իմիշ :

—Թէքըրա աշիւ կաղէթալարըն եազտըլընա կէօրէ Սէլանիկտէ պիր թագըմ թիւրք պաշը պօզուք լար սօղազլարը տօւաշարագ , եա շասըն թիւրքիա գըրըլսըն Մակե դոնիա տէյու պաղըրմըշլար պուլըն իւզէրինէ գօնօլուլար վալիլէ միւ րաճաթ իթմիշլէր իսէ . վալի ճէվապէն պուկարտա թիւրք գօ միթէլէրի տիր քի Մակեդոնիայը ալմագ իսթէյէն պուկար գօմիթէ լէրինէ գարշը նիւմայիշ իտիյօր լար տէմիշ տիր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Էճնէպի կաղէթալարընըն պէյան նընա նազարէն , Պուկար հէյլէթը վիւքէլամը եէնի պիր պէյաննամէ թանգիմ իլէ գօմիթէլէր իչիւն շիտտէթի թէտպիլէր էլէ ալընա ճաղընը իլան իտէճէք իմիշ :

—Պուկար խարիճիլէ նազըրը Մ . Տանէֆ պիր կաղէթա մուխ պիրի իլէ կէօրիւշտիլիկնտէ պուկար հիւքիւմէթիլինի բօլիթիգասը Պալքանտա սուհըն աւալիշին իպ գասընա հասը օլընաճաղը պէյան իթմիկի կիպի . պէյնէթալիլէ պիր մէսէլէ օլան Մակեդոնիանըն իսլահընտա էվրոֆա տէօզլէթլէր թալէպընա օլմագա մէճպուր պու լընտըլարը իլափէ իթմիշ տիր :

—Մ . Գարալէօֆ իսթիգրագ իթմէտէն պուկար մալիլէսինի թանգիմինէ օզրաշաճաղընը պէյան իթմիշ տիր :

ԲՈՒՍԻԱ

Պունտան իբի սէնէ էվվէլ Բէ թէրպուրկտա Պէօյիւք Բէժրօ գալէսինտէ մահպուսէն վէֆաթ իտէն թալէպէ վէցուլանըն վէֆա թընըն սէնէյի տէվրիլէսի միւնա սիպէթի իլէ , շէհըր մէզքիւր պէօ յիւք քիլիսէսի մէյաւնընտա թալէպէլէր զայէթ պէօյիւք վէ փա թըրթըլը պիր նիւմայիշտէ պուլըն մըշլար , զապըթա միւտալիլէ իթ միշ օլուպ չօք քիշի էօյիւշ վէ եարալանմըշ օլտուղու կիպի տէր տէսթլէ հապտա օլընմըշլար :

—Թէքըրա Բէթէրպուրկտան վէրիլէն պիր թէլէկրաֆա նազարէն . Մուկուտա թալէպէլէր պիւլիլէնէ ահալի իլէ պէրապէր պէօյիւք պիր նիւմայիշ իտուպ վալի վէ Չարըն աճաթը կուան Տիւք Սէրօին սա ըրալը իւզէրինէ հիւքիւմ իտուպ ճալարը գըրմըշլար վէ պիւնանըն էթրաֆնտաքի տիւվարարը էքզմա զա գալըշլար : Ասկէրլէր վէ Ժանտարմայար եէթիլուպ աճագ սարալը գուրթարապիլմիշլէր :

Այնը պու կիպի նիւմայիշլէրտէ խարքուտա Գիէֆտէ վէ Օտէստա վուգու պուլուպ , թալէպէ , էհալի , բօլիս վէ սսկէրլէր պէյնիտէ գան լը միւտարըպէլէր վուգու պուլուշ տըր :

Բէթէրպուրկ տարիլ ֆինուր պիւպիլիլին զաբանմըշ տըր :

—Բուսիա մէարիֆ նազըրը Մ . Պօկտէլօֆիլ րէվօլվէր իլէ թէլէֆ իտէն թալէպէ Բիէր Գարբօվիշ իս մի իլէ 25 եաշընտա լէհիլ պիր տէ լիգանը օլուպ իսթինթագընտա «գօրգմայըն , քէնտիլի գուրթար . մաղա զայրէթ իթմէյէճէկիմ հէր նէքի իթմէք պօրճուժ իտի իսէ ա նը եափտըմ» տէմիշ տիր :

—Չիւտէ թիւրքիլէհանէլէր իմալը իչիւն Մուքուտա 1 միլիոն րուպիլի իլէ պիր շիւքէթ թէշլէր օլունմուշ տըր :

—Բուսիա րէտիֆ սսկէրլէրի վէ օնլարա լաղըմ օլան աթլարը ահա լիտէն թօփլամագ իչիւն ումուժ վալիլէրէ էմը վէրմիշ տիր :

ԳԱՐԱՏԱՂ

Գարաւտղըն էն էհէմիլիլէրի իբի նօթթալարընտա շըմէնտըքէր եափմագ իմթիյաղլարը իթալիա գուճաւնեալարըն վէրիլմիշ տիր :

ՉԻՆ

Չիւտէքի Ֆրանսըզ առկէրլէրին տէն 10,000 քիշի եազըլլարտա Ֆրանսայա տէօէճէքլէր :

—Բէքինտէ սիւֆէրալը էճնէ . պիլիշ Զին մէմուրարընտան 96 քի շինին ճէզալանմասընը վէ 6 մէ մուրընտա իտաժըն թալէպ իթմէ լէրինէ գարշը Բուսիա էլիլիսի շի քեալէթ իթմիշ տիր :

Հաթիթա պուկարըն գապահա թը թահագգուգ իթմէ պիլիշ , աֆիլ օլընալարը հազգընտա իսրար իթմիշ օլտուղը ինկիլիզ կաղէթա լարը եաղմագտա տըրլար :

—Նիւ Եօրք Հէրալտ կաղէթա սընըն Բարիլտէ պասըլան նիւսիւս սինտէ եազըլտըղընա կէօրէ , Թի էնճինտէ Բուսլար իլէ ինկիլիլէր պէյնիտէ պիր հատիսէ վուգու պուլուպ , Ֆիանսըլար ինկիլիլէրէ քէ գարշը Բուսլար իլէ պիլիլէլպ պիր գաշ տէֆա արալարընտա գան լը մուհարէպէլէր վուգու պուլուշ վէ հէր իքի եսնտան չօք քիշի եա րալանմըշ , Շիմտի մահալի ինկիլիլ թէնէրալը Գըմպէլ թիլէն Չին աէքի ինկիլիլ մահալէսինտէն Ֆը րանսըլարը տըշարը աթմիշ տըր : Մարէշալ վալտէրղէ ինկիլիլլէր վէ Բուսլար արաւընա կիրմէք իս թէմիշ իսէտէ Բուսլար գապուլ իթմէմիշլէր :

—Բուսիա Մանչուրիա իչիւն Չին հիւքիւմէթի իլէ եէնի պիր մուհհէտէ եափտըղը վէ միւնտէ րիճաթը իսէ զայլէթ կիզլի սագ լանըլտըղը «Մաթէն» կաղէթասը եազըլար :

ԱՆՄԱՆԻԱ

Պէրլինտէն վէրիլէն պիր թէլէկ լաֆ իմրէրաթօրըն եարասը էփէ իճէ էյիլէշմիշ օլտուղը վէ ազ հիւնտէն տըշարը չըգապիլէճէկիլի պիլտիլիյօր :

—Ֆրանգօ Ալման մուհարէպէ սինտէ , Ֆրանսատան զապթ օլը

նան Ալգաս Լօրէն էյալէթլէրին պաղը եէրլէրինտէ շիմայիլէ գաւտար լիսանը րէսմի մագաժընտա գուլա յըլան ֆրանսըզ լիսանը պիւսպի թիւն մէնն օլընուպ , եէրինէ Ալման ճանըն իսթիմալիլի էմը օլունմուշ աղր :

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Վէլի ահա տիւք տը Գօրնուալ իլէ ղէպէսի , Աւատալիայա վէ Հինսիտանա զիյարէթ իթմէք իւզրէ Բօրթալուլտան «Օֆէր» հարպ սէֆինէսի իլէ եօլա չըգմըլ լար :

Տիւք տը Գօրնուալ հարաքէ թիւնտէն էվվէլ Գրալ էտուարտ պիր նուլթ իրաւ իտէրէք , քէնտի միւսթէվիլէթաթը օլտըրթրանսփալ մուհարէպէսինտէ օլտըղը մուպէ նէթտէն տօլալը ինկիլիլէրտ նա մընա թէշլէքքիւր իթմէսինի մախ տուճընա թափսիլէ իթմիշ տիր :

—Նէշր օլընան րէսմի պիր ճէա վէլտէ Գրալիշա Վիթթօրիանրի ճէնագէ ալալը իչիւն , 35,500 ի րա սարֆ օլընտըղընը պիլտիլիյօր :

ՏՕՔԹ . ՍԻՄՈՆ ԳՈՒԹՈՒՄՃԵԱՆ

Մանկաբարձ , կնիստաբոյժ եւ մասնագէտ միզալիլի հիւսնդոքիւն

Որ բաւական ժամանակէ ի վեր Բա . րիզ կը գտնուէր , բժշկական նորա . նոր գարմանուճիւնրու ուսումնասիրու . թեանց , եւ յիշեալ ճիւղերու մշակման համար , այժմ վերադարձած ու Ֆիլի . պէ հաստատուած է , մեծ պողոտային վրայ նամակատան ճիւղ դէմի փողո . ցին մէջ :

Հիւանդ կընդունի ամեն օր ժամը 2—6 վերոյիշեալ դարմանատունը : Հիւքաբարժի օրերը միւսնոյն ժամերուն միայն կանայք ճիւղաբար կը դարմա . նուին :

1—6

ԿԸ ՓԵՏՈՒԻՆ

Բնիկ Թամգարագի Գալուստ իտիշ . եան անուն միջնադար , սեւանք եւ սեւաչեայ երիտասարդը շուրջ 11 տա . րի առաջ Տաճկաստանէն հեռացած է եւ մինչեւ ցարդ իր ընտանիքն ու ազ . ականները իրմէ ունէ նամակ կամ տեղեկութիւն չէն ստացած : Ուտի կը խնդրեն յարգօյ ազգայիններէ օր . եթէ յիշեալ Գալուստի մասին տեղե . կութիւն ունեցող կայ , հաճի երկտ . րով մը խմբագրութեանս իմացնել :

Տեղա գտնուող հայ կին մը Թա . խանճագին կը խնդրէ իր զաւկէն , Յակոբ Շահինեան միջնադար , սե . ւականի 27 տարեկան օր իր արգա . նուիլը իմացնէ : Կը կարծուի թէ Պօս . րոն կը գտնուի , Պօսրոնի—Ամերիկա . յի հայերը եթէ յիշեալ երիտասարդին վրայ տեղեկութիւն ունէ տան , մեծ բարիք մը ըրած պիտի ըլլան :

ՊԼԿ . ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Սօֆիա քաղաքի վիճակահանօթ թեան տոմսակներով իրենց բաղդը փորձել փափաքողներ թող գիմին Տիար Կարապետ Շիրինեանի , տե . րանուոր ի վառնա , և Տիար Մ . Թիլիլիւնեանի ի Ռուսնուք :

Ուրիշ քաղաքներէ եղած յանձ . նարարութիւնք ամենայն ճշգու . թեամբ և անմիջապէս կը գործա . դրուին :

Отговорникъ Н. Драгулевъ
II. «Взаимность» Варна